ԿԱՐԾԻՔ

Նելլի Վանիկի Հունանյանի՝ «Լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները վաղ մանկական աուտիզմով երեխաների հաղորդակցման գործընթացում» վերնագրով, ԺԳ.00.01 թվանիշով «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Գաղտնիք չէ, որ վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքային գործընթացն ունի ինքնատիպ և ախտաբանական զարգացում: Նրանց խոսքային գործընթացում առկա դժվարությունները, ինչպես նաև հաղորդակցվելու ցանկության բացակայությունը դրսևորվում են հենց այդ տարիքից և պահպանվում են երեխաների համարյա ամբողջ կյանքի ընթացքում:

Լոգոպեդական աշխատանքների վաղ կազմակերպումը, դրանց առանձնահատկությունների վերհանումը կարևորվում են այն հանգամանքով, որ խոսքային գործընթացի, ինչպես նաև բանականության զարգացման մակարդակի առկայության ցուցանիշներից է կախված այս երեխաների սոցիալական հարմարվողականությանը ենթարկելու հավանականությունը:

Այս մտքերը կիսելով ճանաչված արատաբան գիտնականներ Վ.Ե. Կագանի, Դ.Ն. Իսանի, Մ.Յ. Վեղենինայի, Ի.Ա. Կոստինի, Ս.Ս. Մորոզովայի, Օ.Ն. Օկունևայի, Ի.Ի. Մամայչուկի, Վ.Վ. Կովալյովի, Լ.Գ. Նուրիևայի, Ս.Հ. Սուքիասյանի, Ս.Պ. Մարգարյանի, Օ.Ս. Նիկոլսկայայի հետ, ատենախոսն իրավացիորեն գտնում է, որ

- դրանք հիմնականում նվիրված են եղել մանկական աուտիզմի կլինիկական և հոգեբանական տեսանկյուններին, որ
- դրանց նկատմամբ մանկավարժական մեթոդական մոտեցումներն ուսումնասիրված չեն, որ
- մինչև այսօր գրեթե չկան լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացմանը նպաստող մայրենի լեզվով մշակված հատուկ մոտեցումներ, մեթոդական խմբեր, անհրաժեշտ միջոցներ, ինքնատիպ ձևեր, որոնք կարող են նպաստել այս երեխաների հետ տարվող լոգոպեդական աշխատանքների իրականացմանը, նրանց հաղորդակցական

գործընթացի զարգացմանը, որ

- այդ ուղղության տեսական և գործնական հետազոտությունը կարող է կարևոր նշանակություն ունենալ այս երեխաների խանգարված հաղորդակցման գործընթացի վերականգնման կամ հաղթահարման ուղղությամբ:

Այս հարցերը բարձր մակարդակով և գիտականորեն լուծելու նպատակով, ատենախոսն իր **առջև միանգամայն իրավացի նպատակ** է դրել.

- Նախ ուսումնասիրել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը ձևավորող և զարգացնող լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները:
- Ապա և մշակել լոգոպեդական մեթոդների համակարգ, միջոցներ, աշխատանքի հատուկ ձևեր:
- Եվ ստեղծել աշխատանքների արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմաններ:

Եվ հետազոտության ընթացքում ատենախոսը

- առանձնացնելով **«օբյեկտը»** և **«առարկան»**,
- իրականացնելով գիտական ենթադրությունը՝ **«վարկածը»**,
- իր առջև դնելով **«նպատակից»**, **«օբյեկտից»**, **«առարկայից»** ու **«վարկածից»** բխեցված **«խնդիրներ»**,
- օգտագործելով հետազոտությանը համապատասխանող մեթոդներ, հանգեց այն **«գիտական նորույթին»**, որ
- **բացահայտեց** վաղ մանկական աուտիզմ ունեցող հայախոս երեխաների հաղորդակցման գործընթացի առանձնահատկությունները,
- **որոշեց** հիմնախնդրի վերաբերյալ լոգոպեդների, հոգեբանների և նման երեխաների ծնողների իրազեկվածությունը,
- **ուսումնասիրեց** և **վերլուծեց** վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման գործընթացի լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունն ապահովող նախադրյալները,
- մշակեց ու **գործնականում ներդրեց** վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացմանը նպաստող լոգոպեդական աշխատանքի նոր ուղիներ, դրանց կիրառման համապատասխան մանկավարժական պայմաններ:

Այս ամենին և հիմնախնդրի լուծմանը ատենախոսը հասավ երեք կարևոր պրոբլեմների՝

- Հիմնահարցի դրվածքի, հետազոտության խնդիրների, մեթոդների և կազմակերպման:
- Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման առանձնահատկությունների գծով հետազոտությունների և
- Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը զարգացնող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունների և հիմնական ուղղությունների լուծման միջոցով, դրանք ներկայացնելով որպես գլուխներ: Իսկ գլուխների շարադրանքում լուծում է հարցեր, որոնք լույս են սփռում իր հիմնախնդրի գիտական մեկնաբանման վրա: Այսպես.

Ատենախոսության **առաջին գլխում** շոշափվում են.

- վաղ մանկական աուտիզմի մեկնաբանման ժամանակակից տեսանկյուններին,
- վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների բժշկական, հոգեբանական և մանկավարժական դասակարգման համակարգերին,
- այդ երեխաների խոսքի զարգացման առանձնահատկություններին և,
- հետազոտության տեսական հիմնավորմանը, նրա խնդիրներին, օգտագործած մեթոդներին և գործընթացի կազմակերպման վերաբերյալ հարցերը:

Դրանք շարադրման մեջ ներկայացվում են

- **Տրամագրի տեսքով**, որտեղ վերլուծվում են տարբեր տիպի ուղեղային ախտահարումների **դրսևորման հարաբերակցությունները**:
- **Գծապատկերների տեսքով**, որտեղ մեկում ներկայացվում է աուտիզմի առաջացման **պատճառահետևանքային մոդելը**, մյուսում՝ վաղ մանկական աուտիզմի, **Ասպերգերի համախտանիշի** և սեմանտիկա-պրագմատիկական **խանգարումների** էությունը:
- **Աղյուսակների տեսքով**, որոնցում տրվում է աուտիզմի **համախտանիշը** երեխաների մոտ ընդհանրապես և վաղ մանկական աուտիզմի և բնականոն զարգացում ունեցող երեխաների խոսքի համեմատական բնութագիրը, որոնք ատենախոսը պարզ ու մատչելի, վստահ ու հաստատ, գրագետ ու բովանդակալից լեզվով ենթարկում է գիտական վերլուծության:

Հեղինակը ատենախոսության երկրորդ գլխում վեր է հանում ու վերլուծում

- Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման ձևավորմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունների գծով սոցիոլոգիական հարցումները:
- Նրանց վարքային ոլորտի, թեք հայացքով հաղորդակցվելու, իմպրեսիվ խոսքի, էքսպրեսիվ մտքերի, ոչ խոսքային և խոսքային հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունները և շարադրում որպես վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցության զարգացման միջոց, իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող տրամագրերի օգնությամբ, որտեղ քննարկվում են.
  - հանրակրթական և հատուկ դպրոցներում աշխատող լոգոպեդների և արատաբանություն ուսումնասիրող ուսանողների պատրաստակամությանը,
  - վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների ենթարկվելու, տևական ժամանակ նստելու և ագրեսիվություն դրսևորելու, ուշադրությամբ կամ հայացքով հաղորդակցվելու առանձնահատկություններին,
  - հետազոտվող երեխաների կողմից խոսքի մասերն ընկալելու կարողության մակարդակին,
  - նրանց մոտ էքսպրեսիվ խոսքի առկայության ցուցանիշներին և,
  - վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների կողմից վերբալ խոսքի և ժեստերի միջոցով հաղորդակցման կարողությունների ցուցանիշներին վերաբերող հարցերը:

Ատենախոսության երրորդ գլուխն իր մեջ ներառում է

- Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման նախադրյալների ձևավորման մեթոդներն ու միջոցները, վարքային ոլորտի խանգարումների հաղթահարման, երեխաների հայացքով հաղորդակցվելու կարողության ձևավորման ուղիները, ինչպես նաև
- Փորձարարական հետազոտությունների արդյունքներն ու առաջարկված մոտեցումների արդյունավետությունը:

Այս գլխում արծարծվող գիտական հարցերը ատենախոսը բացահայտում է բավական կուռ կառուցվածք ունեցող 5 գծապատկերների, 6 աղյուսակների և 3 տրամագրի միջոցով:

Դրանցում շոշափվում են գիտականորեն հիմնավորված հարցեր, որոնք վերաբերում են

- **երեխաների** հաղորդակցման գործընթացի ձևավորմանն ու զարգացմանը նպաստող անհրաժեշտ **նախադրյալներին,**
- գործընթացում իրականացվող լոգոպեդական աշխատանքների օրինակելի համակարգին,
- գործընթացի ձևավորմանն ու զարգացմանը նպաստող ուշադրության և վարքային ոլորտի խանգարումների հաղթահարմանը, իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի և դրանց հաղորդակցման միջոցների զարգացման ուղիներին,
- վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների մոտ գործողությունների և արտաբերական շարժումների նմանակման կարողություններին, փորձարկվողների հայացքով այդ կարողությունների, իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի, ոչ խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման ու զարգացման համեմատական ցուցանիշներին,
- փորձարկվողների կողմից գիտափորձի տարբեր փուլերում երեխաների ագրեսիվ դրսևորումների և անվանն արձագանքելու կարողության ցուցանիշների փոփոխություններին:

Ի պատիվ ատենախոսի պետք է ասել, որ ամեն մի հարցի քննարկում ուղեկցվում է փորձարարական աշխատանքի ընձեռած վիճակագրական և գիտական տվյալներով, արդյունքների վերածած թվերի լեզվով, մանկավարժության դասականների և ճանաչված արատաբանների կողմից քննարկվող հիմնախնդրին վերաբերվող հարցերի հետ համեմատությամբ:

Ատենախոսության **գիտական բարձր մակարդակը** մենք պայմանավորում ենք

- **Գիտական ապարատի** ներդաշնակությամբ և հիմնավորվածությամբ, նրանով, որ
  - ատենախոսության **թեմայի** ընտրությունը **արդիական է,**
  - հետազոտության **խնդիրները** համապատասխանում են նրա **նպատակին:**
  - **Ատենախոսության բովանդակությունը** իր ողջ շարադրանքով համապատասխանում է ընտրված **թեմային:**
  - Ընտրված և հետազոտության նպատակով օգտագործված բոլոր **մեթոդներն արդյունավետ են:**

- Ատենախոսի կողմից արված **«Եզրակացությունները»** բխեցված են **«հետազոտության խնդիրներից»**. ու և՛ ձևի, և՛ բովանդակության տեսանկյունից **համապատասխանում են նրանց**:
- Օգտագործված **գրականության** հիմնական մասն **արտացոլված** է ատենախոսության շարադրանքում:
- Իսկ **ատենախոսը** օժտված է գիտափորձ անցկացնելու և ստացված **տվյալները** ի նպաստ հետազոտության **վերլուծելու** կարողությամբ:

- Ատենախոսության **կուռ** շարադրանքով և մանկավարժական **լեզվի**՝ պարզ ու մատչելի, վստահ ու հաստատ, գրագետ ու բովանդակալից **տեսակների** օգտագործմամբ:

Ատենախոսությունն արժանի է ամենայն դրվատանքի **գիտական բարձր մակարդակ** ունենալու, **ավարտուն և ինքնուրույն** հետազոտություն լինելու, **գիտական նորույթի հիմնավորվածության**, հետազոտության **վարկածի** իրականացման և մշակվածության համապատասխան աստիճանի համար:

Բայց աշխատանքը կարող էր լրիվ կատարյալ լիներ, եթե

- գլուխների համաչափության պայմաններում (**առաջին գլուխը 36** էջ, երկրորդ գլուխը՝ **38** էջ, երրորդը՝ **50** էջ), ենթագլուխները իրենց հարուստ բովանդակության պարագայում համապատասխանեին պահանջվող էջերի քանակին (**առաջին գլխի** 1.4.-ը՝ 4 էջ, **երկրորդ գլխի** 2.2.-ը՝ 7 էջ, 2.4.-ը՝ 5 էջ, 2.5.-ը՝ 6 էջ, **երրորդ գլխի** 3.1.-ը՝ 5 էջ, 3.3.-ը 6 էջ):
- Շարադրանքում **հղումներն արված են** և գրականության ցանկի աղբյուրի համարով և էջերի տողատակերով: Երկուսն էլ ընդունելի են, բայց միայն առանձին-առանձին, այլ ոչ միասին, մի հղումը երկու կետերից:
- Ցանկալի էր ներկայացված հետազոտության գիտականությունը և մեթոդական կողմերը լրացնող, ես կասեի հիանալի, համարյա անթերի «Հավելված» որոշ թերթիկներ, մասնակիցների կողմից, որպես արդյունավետության ապացույց, լրացված ներկայացվեին: Ասենք **«Հավելված» 1-ի՝ « Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխայի խոսքի հետազոտման քարտը »**, **« Հավելված » 2 - ի՝**

«Հետազոտության արձանագրություններից» որևէ մեկը:

Բայց մասնագիտական աչքի համար պարզից էլ պարզ է, որ նշված դիտողություններն, ինչ խոսք, օգտակար լինելով ատենախոսության համար, բնավ չեն իջեցնում նրա գիտական արժեքը, իր տեսակի մեջ ինքնատիպ լինելը:

Եվ կրկնելով վերևում ասված միտքը, որ հետազոտությունը բարձր մակարդակով գրված, ավարտուն և ինքնուրույն աշխատանք է, հանգում ենք այն եզրակացության, որ Նելլի Վանիկի Հունանյանի **«Լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները վաղ մանկական աուտիզմով երեխաների հաղորդակցման գործընթացում»** վերնագրով ԺԳ.00.01 թվանիշով, «Մանկավարժության տեսություն և պատմություն» («Հատուկ մանկավարժություն») մասնագիտությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման **կանոնակարգի 7-րդ կետով թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:**

Առաջարկում ենք Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» **020 մասնագիտական խորհրդին** պաշտպանվող ատենախոսության հեղինակ **Նելլի Վանիկի Հունանյանին** շնորհել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, **ԺԳ.00.01 թվանիշով և «Մանկավարժության տեսություն ու պատմություն»** («Հատուկ մանկավարժություն») մասնագիտությամբ:

Առաջին պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ վաստակավոր մանկավարժ,
մանկավարժական գիտությունների
դոկտոր, **պրոֆեսոր** Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

08.11.2019թ.
ք. Երևան

Պրոֆեսոր Մնացական Մանուկյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտ.քարտուղար, դոցենտ
Մ. ԻՍՊԻՐՅԱՆ